



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

03 հունիսի 2019 թվականի թիվ 58-Ա

ք. Երևան

#### «ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2019 թվականի մայիսի 13-ին հարուցված թիվ 6 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը 2019 թվականի մայիսի 13-ին «ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքում Ընկերության եթերում արձանագրված մեկ եթերային ժամի հաշվով գովազդի տևողության խախտումը:

Ընկերության եթերում (հեռարձակման հաճախականությունը՝ 103.1 ՄՀց) մեկ եթերային ժամի հաշվով հեռարձակվել է գովազդ 14 րոպեից ավելի տևողությամբ՝ խախտելով «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

Հանձնաժողովը 2019 թվականի մայիսի 13-ին հարուցված վարչական վարույթի մասին տեղեկացրել է Ընկերությանը և հայտնել, որ այդ հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Ընկերությունը ներկայացրել է իր պարզաբանումները, համաձայն որի՝ գովազդի տևողության խախտումը տեղի է ունեցել ավտոմատացված ծրագրի տեխնիկական խափանման պատճառով:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ հեռուստառադիոընկերությունների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Արգելվում է ռադիոհեռուստատեսային հաղորդման ընթացքում հեռարձակել գովազդ յուրաքանչյուր 1 եթերային ժամի հաշվով 14 րոպեից ավելի տևողությամբ: Եթերային ժամի հաշվարկը սկսել յուրաքանչյուր օր 00.00 ժամից:»:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «1. Հանձնաժողովի կողմից հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կրկնակի դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին Հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու դեպքում Հանձնաժողովը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք:»:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 10-րդ մասը սահմանում է. «10. Ռադիոհեռուստատեսային հաղորդման ընթացքում ավելի քան քսան րոպեն մեկ հաճախականությամբ կամ յուրաքանչյուր մեկ եթերային ժամի հաշվով տասնչորս րոպեից ավելի տևողությամբ գովազդ հեռարձակելը`

առաջացնում է տուգանքի նշանակում` սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 10-րդ մասով` Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված տույժը` տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան` ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ`**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

03 հունիսի 2019թ.

ք. Երևան